ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ФАКУЛЬТЕТ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ

YEREVAN STATE UNIVERSITY

FACULTY OF INTERNATIONAL RELATIONS

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

• ՀՀ, քաղաք Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 60)71-00-79, 71-00-78, int.rel@ysu.am, www.ysu.am

№ 259 «__12____»___09_____2025 թ.

Արձանագրություն N 259

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2025թ-ի սեպտեմբերի 12-ի նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 36 (երեսունվեց) անդամներից 28-ը:

1. Ռոտացիայի ցուցակներն ի գիտություն ընդունելու հարցը / զեկ.՝ դեկանի տեղակալ-գրասենյակի ղեկավար Գոռ Պետրոսյան/:
2. Անվանական կրթաթոշակների տրամադրման հարցը / զեկ.՝ դեկանի տեղակալ-գրասենյակի ղեկավար Գոռ Պետրոսյան/:
3. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը /զեկ.՝ գիտքարտուղար Գրիգոր Բալասանյան/:
4. Թեկնածուական ատենախոսության թեմայի վերախմբագրման հարցը /զեկ.՝ գիտքարտուղար Գրիգոր Բալասանյան/:
5. 2026թ. սեպտեմբերի 1-ից ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնում «Համաշխարհային քաղաքականություն» մագիստրոսական ծրագրի փոխարեն «Միջազգային անվտանգություն և կայուն զարգացում» վերտառությամբ նոր կրթական ծրագրի՝ (2 տարի տևողությամբ) ներդրման հարցը /զեկ.՝ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ ժակ Մանուկյան/:
6. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

1. Ռոտացիայի ցուցակներն ընդունել ի գիտություն:

2. Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության և Քաղաքագիտության ամբիոնների հեռակա ուսուցմամբ ասպիրանտներին և հայցորդներին ատեստավորել:
3. ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի «Միջազգային հարաբերություններ» կրթական ծրագրի բակալավրի 4-րդ կուրսի ուսանող **Սամվել Հովհաննիսյանին** ներկայացնել Ջոն Կիրակոսյանի անվան կրթաթոշակի, իսկ «Քաղաքագիտություն» կրթական ծրագրի բակալավրի 3-րդ կուրսի ուսանող **Անդրանիկ Հակոբյանին**՝ Ռուբեն Միրոյանի անվան կրթաթոշակի:
4. Քաղաքագիտության ամբիոնի 2018թ.-ի հեռակա ասպիրանտ Նարինե Վյաչեսլավի Ասրյանի թեկնածուական ատենախոսության նախկին թեման՝ «(Վերա)բաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության գնահատման կորելյացիոն առանձնահատկությունները հետխորհրդային երկրներում», վերաձևակերպել հետևյալ կերպ՝ **«Վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխազդեցության գնահատման առանձնահատկությունները հետխորհրդային պետություններում» ԻԳ.00.02 (Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ)** մասնագիտությամբ:
5. Տալ համաձայնություն 2026թ. սեպտեմբերի 1-ից ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնում «Համաշխարհային քաղաքականություն» մագիստրոսական ծրագրի փոխարեն «Միջազգային անվտանգություն և կայուն զարգացում» վերտառությամբ նոր կրթական ծրագրի ներդրմանը (2 տարի տևողությամբ):

Գիտական խորհրդի նախագահ *Տ. Եփրեմյան*

Գիտական խորհրդի քարտուղար *Գ. Բալասանյան*